զայդ։ Իսկ, յամին 1125 հաւանական է որ թողած լինի Սարգիս իւր վարժարանը. վասն զի ճիշդ այս թուականին՝ այսինքն է Գրիգորիսի կաթողիկոսութենէն 12 տարի վերջ՝ հայրապետական աթոռն Տովք ղղեակն փոխադրուելով, նաեւ Գրիգորիս և Ներսէս Շնորհալին բոլորովին կը հեռանան ի Կարմիր վանաց, որ և ոչ սակաւ ժամանակէն կը կրսնցնէ իւր նշանակութիւնը։

Սարգիս իւր կեանքն այնքան տարի վանական կենաց անդորրութեան վարժեցնելէն յետոյ, այնուհետեւ չէր կարող մոռնել աշխարհի մէջ. ուստի այն ինչ եւած ի Կարմիր վանաց՝ ղէպուղիղ կ'ուղեւորի ի Վանս Քարաշիթու[1], որ է, կ'ըսէ[2] իւր վարուց համառօտողն Կարապետ վ. «Սուրբ Ուխտ ճգնաւորաց», որոց հետ միանալով ո՛չ եւս կը հեռանայ այդ սրբավայրէն, վասն զի կը յաւելու[3] նոյն պատմիչն, թէ «Արար բնակութիւն իւր... անդ աւարտեաց զաստուածային մատեանս և ի նոյն տեղի կան սուրբ նշխարք ոսկերաց նորա»։ Ուսկից միանգամայն կը տեսնուի, թէ Սարգիս հոս իւր կեանքը լոկ ճգնաւորական վաստակօք մաշած չէ, այլ նաեւ ուսումնական աշխատութեամբ, մանաւանդ թէ նոյն իսկ այս տեղւոյս մէջ կը հմտացնէ նա իւր ուսումնատենչ հանճարն անընդհատ ընթերցմամբ սուրբ Գրոց և սուրբ Հարց, մինչեւ իսկ վկայել տալ իւր վարուց պատմչին, թէ «Սա զամենայն ժամանակս իւր՝ ետ զկեանս իւր ի խոկումն սուրբ Գրոց[4]», ինչպէս ինքն իսկ կ'ըսէ, թէ «Յաբաժամ յընթերցուածս Գրոց սրբոց զեղեռեալ նստիմ[1]»։ Արդ, այսչափ ընթերցմունք ոչ միայն կը զարգացնեն Սարգսի միտքը, այլ և շարժառիթ մը կը լինին նորա գրչին, որով ի գիր կ'արձանացնէ նա իւր մտաց մէջ ամբարածները, մեկնելով եօթն առաքելական կաթողիկէ թղթերը, զոր կը վկայէ մեզ Կարապետ վ.[2] հետեւեալ զովասանական խօսքերով. «Զեօթն թուղթս կաթողիկեայց մեկնեալ է և բացայայտեալ՝ շնորհաց սուրբ Հոգւոյն արժանացեալ, երիցս երանեալ և քաղցրաբան քարոզն եկեղեցւոյ, քաջ հռետոր և անյաղթ փիլիսոփայն, վեհագոյն գիտնականն, և մեծ վարդապետն Հայոց՝ աէր Սարգիս, լուսաւոր տեսութեամբ և յորդառատ մեկնութեամբ, միանգամայն յայտնաբանեալ գրեթէ զամենայն զօրութիւնս աստուածաշունչ Գրոց, հին և նոր կտակարանաց, օրինաց և մարգարէից, առաքելոց և աւետարանչաց, ուղղադաւան վարդապետաց և ճշգրտաբան պատմողաց»։

Անտարակոյս ծանօթ է ընթերցողաց Հեղինակիս այս մեկնութիւնն, որոյ զրութեան շարժառիթքն երկուք եղած են՝ ըստ իւր իսկ վկայութեան. նախ, այսպիսի մեկնութեան մի պակասութիւնն թէ՛ Հայոց և թէ օտար ազգաց գրականութեան մէջ. ահաւասիկ իւր խօսքերն. «Մի՝ ոք ի յոյժ քննողացն պարսաւեսցէ զերկս վաստակոց իմոց. զի եթէ զայլ ոք ունէի տարացոյց ի մերոցս կամ յօտարաց[3] հոգ մեկնութեան տարեալ զրոցս այսոցիկ, ոչ այնչափ յանդուգն էի եթէ զայլոց աշխատութիւն յիս առեալ թշնամանէի հոծեալ բանիւք իմովք»։ Երկրորդ, կ'երեւի թէ այլք իսկ բռնադատեր են զՍարգիս սոյն թղթոցս մեկնութիւնն ընելու. վասն զի տեղ

1. Կիլիկիոյ Սեաւ լերանց վանքերէն մին է, հեռու ի Կարմիր վանաց երեքօրեայ ճանապարհաւ (կարաւանի), զոր և կը յիշատակէ Կիրակոս պատմիչ հետեւեալ խօսքերով. «Ոմն վարդապետ Սարգիս անուն սքանչելի ի Վանքն որ կոչի ասորերէն Քարաշիթաւ, արար մեկնութիւնս եօթանեցուանց թղթոց կաթողիկէից, նախերգանօք և յորդորակօք և ընդարձակ և առատ ճառիւք»։ (ի Պատմ. էջ 64)։

2. Ի Յոլքն. մեկն. Ի կաթ. թղթոց էջ 6։

3. Ի Յոլքն. մեկն. Ի կաթ. թղթոց էջ 6։

4. Կարապետ վ. ի Յառաջաբ. էջ 6։

1. Ի Յոլքն. մեկն. Յովհ. Ա. թղթոյն էջ 620։

2. Մեկն. համառօտ կաթ. Ի թղթոց ձեռագիր, էջ 849։

3. Այս խօսքերէս կ'երեւի, թէ Սարգսի անծանօթ եղած պիտի ըլլան Աղեքսանդրացի Եբրեք Հարց Կղեմայ, Որոգինեայ և Դիդիմոսի, ինչպէս նաեւ Իսիքիոս Երիցու սոյն թղթոց վերայ ըրած մեկնութիւնքն, որոց հատակոտորք ցարդ իսկ կը գտնուին ի հաւաքածոյս ազգային և օտար մատենադարանաց։